ՀՀ ԳԱԱ Տեղեկագիր, Գիտություններ Երկրի մասին, 2019, հ. 72, N 1, 71-74
Известия НАН РА Науки о Земле, 2019, т. 72, N 1,71-74
Proceedings NAS RA, Earth Sciences, 2019, v. 72, 1, 71-74

ԳԻՏԱԿԱՆ ԽՐՈՆԻԿԱ



Ակադեմիկոս Աշոտ Տիգրանի Ասլանյանի 100-ամյակին նվիրված գիտաժողով տեղի ունեցավ նրա ծննդյան օրը՝ 2019թ. փետրվարի 7-ին: Գիտաժողովի հանդիսավոր նիստը բացեց ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռ.Մ. Մարտիրոսյանը՝ ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում: Ա.Տ. Ասլանյանի գիտական և պետական գործունեության մասին զեկուցումով հանդես եկավ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ռ.Լ. Մելքոնյանը, որին հաջորդեցին ելույթ-հիշողություններ՝ Ա.Տ. Ասլանյանին ճանաչողների, ուսանողների, գործընկերների կողմից:

Փետրվարի 7-ին և 8-ին Երկրաբանական գիտությունների ինստիտուտի (ԵԳԻ) դահլիճում ներկայացվեց 15 գիտական զեկուցումներ ԵԳԻ, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի, Գյումրու ՀՀ ԳԱԱ Ա. Նազարովի անվան երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտի և այլ կազմակերպությունների աշխատակիցների կողմից: Գիտաժողովի ծրագրին և նյութերին կարելի է ծանոթանալ (http://www.geology.am/ conference) ԱՅՍՏԵՂ:

Լ.Հ. Սահակյան, ՀՀ ԳԱԱ ԵԳԻ